

ՀՀ ներդրումային միջավայրը միջազգային ներդրումային գործընթացների զարգացման միտումների համատեքստում

Գևորգյան Արմինե

***Հանգուցային բառեր.** համաշխարհային շուկա, ֆինանսական ռեսուրսներ, գլոբալացում, մրցակցություն, խթանող քաղաքականություն, տնտեսական աճ*

Համաշխարհային շուկայում երկրների միջև մրցակցությունը օտարերկրյա ուղղակի ներդրումների (ՕՈՒՆ) համար ավելի սուր բնույթ է կրում, քան սպառման շուկաների համար մրցակցությունը, քանի որ ՕՈՒՆ-ները իրենց հետ բերում են նաև սպառման շուկաների լայն հորիզոններ, ինչով էլ պայմանավորվում է աշխատանքի ուղղվածությունը: Ընդ որում՝ ՕՈՒՆ-ի համար մրցում են ոչ միայն զարգացող, այլև զարգացած երկրները, որի հետևանքով էլ պայքարը դառնում է ավելի «կատաղի»:

Այն երկրների համար, որոնց տնտեսությունը կարիք ունի ոչ միայն առողջ ֆինանսական ռեսուրսների «ներարկման», այլև բացառիկ արագությամբ զարգացող նոր տեխնոլոգիաների ու սարքավորումների ներդրման, այսօր առավել արդյունավետ և հրատապ միջոց, քան ՕՈՒՆ, չկա: Բնականաբար պարզորոշ է ՕՈՒՆ-ների ուսումնասիրության արդիականությունն ու հրատապությունը ներկայիս համաշխարհային տնտեսության և ազգային տնտեսությունների համահարթությունում: ՕՈՒՆ-ը այժմ երկրի տնտեսական աճն ապահովող ամենաազդեցիկ և ժամանակի առումով ամենաարագ նշանակալից արդյունքներ ունեցող գործոններից մեկն է: Ուստի այն միանշանակ հրատապ է այն երկրների տնտեսության համար, որոնք տեխնոլոգիապես հետ են մնում զարգացած երկրներից: Այդ իսկ պատճառով այն երկրների համար, որտեղ ՕՈՒՆ-ները ունեն կենսական անհրաժեշտություն, կարևոր է հասկանալ այն, թե ներկայիս գլոբալացված համաշխարհային տնտեսությունում ինչ գործոններ և միջոցներ են ազդում կամ կարող են ազդել ՕՈՒՆ-ի վրա: Այս երկրների շարքում է նաև Հայաստանը, որը պետք է մրցակցի ոչ միայն անմիջապես տարածաշրջանի երկրների, այլև ԱՊՀ և Արևելյան Եվրոպայի նորանկախ երկրների հետ:

Տարբեր երկրների տնտեսական համակարգերը գնալով ավելի բաց են դառնում և ավելի գրավիչ օտարերկրյա ներդրումների համար: Մի շարք երկրներ որպես իրենց հիմնական ռազմավարություն որդեգրել են օտարերկրյա ներդրումների միջոցով տնտեսական աճի ապահովումը [11]: Մրցակից երկրներից հետ չմնալու նպատակով ՀՀ-ն ուղղակի պարտավոր է ներկայիս գլոբալացման ընթացակարգերին համահունչ տարատեսակ քայլեր ձեռնարկել ներդրումային դաշտի գրավչության բարձրացման և ներդրումային արդյունավետ քաղաքականության մշակման գործում: Հենց սա է պայմանավորում աշխատանքի ուղղվածության արդիականությունը, կարևորությունն ու գործնական նշանակությունը նաև ՀՀ տնտեսության համար:

ՀՀ կառավարությունը երկարաժամկետ պարտավորություն է իր վրա

վերցրել՝ ներգրավել օտարերկրյա ուղղակի ներդրումներ՝ տնտեսական աճը խթանելու ու պահպանելու, աղքատությունը հաղթահարելու համար: Այնուամենայնիվ, զարգացման ռազմավարություն մշակելիս հիմնական խնդիրն ՕՈՒՆ-ի համար բարենպաստ պայմանների առկայությունն է: Բարենպաստ բիզնես միջավայրը և մեծածավալ ՕՈՒՆ-ները միևնույն ժամանակ կիեշտացնեն նաև մասնավոր ընկերությունների գործունեությունը, ինչը ՀՀ համար առաջնային է ևս: «Ներդրումային միջավայր-օտարերկրյա ներդրողներ» փոխհարաբերություններում հատկապես կարևոր տեղ է զբաղեցնում պետությունը, որը ներդրումային քաղաքականության միջոցով ակտիվ ազդեցություն ունի ներդրումային միջավայրի մյուս տարրերի վրա:

Այսօր կարելի է խոսել օտարերկրյա ներդրումների խրախուսման մասին՝ որպես երկրների կողմից տարվող տնտեսական քաղաքականության առանձին ուղղության: Այն սկիզբ է առել դեռևս 60-ականներին, երբ հարավարևելյան Ասիայի մի շարք երկրներ ակտիվորեն սկսեցին խրախուսել օտարերկրյա ներդրումները և կարճ ժամանակահատվածում հասան տնտեսական աճի և արդյունաբերական զարգացման բարձր մակարդակի: Օտարերկրյա ներդրումների խրախուսումը՝ որպես տնտեսական աճի ապահովման կարևոր լծակ, վերջին երկու տասնամյակներում դարձել է համատարած քաղաքականություն գրեթե բոլոր զարգացող, այդ թվում՝ նաև անցումային շրջանի երկրներում: Դրա վառ ապացույցներից են 90-ականների ընթացքում օտարերկրյա ներդրումները կարգավորող իրավական ռեժիմներում ազգային կառավարությունների կողմից ձեռնարկված բազմաթիվ փոփոխությունները, որոնցում կարևոր տեղ են զբաղեցնում ներդրումային խթանները [5]:

Ներդրումների խթանման քաղաքականության գործիքները: Միանշանակ կարող ենք նշել, որ շուկայական տնտեսական համակարգում պետության հիմնական տնտեսական գործառույթը ֆիսկալ և դրամավարկային քաղաքականությունների միջոցով վստահելի և կայուն միջավայրի ստեղծումն է, իսկ ներդրումային խթաններ օգտագործելով՝ շուկայական ուժերի գործունեության լրացումը: Դա պայմանավորված է առաջարկի և պահանջարկի նոր կառուցվածքից բխող տնտեսության կառուցվածքի փոփոխություններն արագացնելու անհրաժեշտությամբ [4]:

Ներդրումների վրա խթանների ազդեցության աստիճանի տեսանկյունից՝ ներդրումները նպատակահարմար է բաժանել երկու խմբի՝ շարժուն և ոչ շարժուն՝ կապակցված որոշակի տարածաշրջանին: Շարժուն ներդրումների դեպքում ներդրման երկիրն առանձնակի կարևորություն չունի տեղակայման վայրերի ընտրության դեպքում, և դրանք կարող են իրականացվել գրեթե բոլոր երկրներում: Նման ներդրումների թվին է դասվում հատկապես շուկայական ուղղվածություն ունեցող ՕՈՒՆ-ը: Դրան հակառակ ոչ շարժուն ներդրումները անմիջականորեն կապված են ներդրման երկրի հետ և երկրի առանձնահատկությունները վճռորոշ դեր են խաղում ներդրումային որոշումների կայացման գործընթացում: Հետևաբար, հումքային ուղղվածություն ունեցող ներդրումների մեծ մասը մոբիլ չէ:

Այժմ քննարկենք երկրների կողմից լայնորեն կիրառվող ներդրումային խթանները և դրանց գործնական կիրառման առանձնահատկությունները՝ ֆինկալ խթաններ (օրինակ՝ արագացված ամորտիզացիան, արտոնյալ հարկային դրույքաչափեր, հարկերից ազատումներ և հարկային վարկեր և այլն), ֆինանսական խթաններ (օրինակ՝ դրամաշնորհներ, արտոնյալ վարկեր և վարկային երաշխիքներ), ոչ ֆինանսական խթաններ (օրինակ՝ որոշակի ենթակառուցյունների զարգացում, արտոնյալ պայմանագրեր կառավարության հետ, որոշակի ծառայությունների մատուցում, ազատ առևտրի, ձեռնարկատիրական և տեխնոլոգիական գոտիների ստեղծում և այլն): Ներդրումային խթանների այս դասակարգումը տրվել է ՏՀԶԿ-ի կողմից և լայնորեն կիրառվում է այս ոլորտում կատարվող հետազոտություններում:

Ոչ ֆինանսական խթանները հաճախ վճռորոշ նշանակություն ունեցող այնպիսի գործոններ են, որոնց, սակայն դժվար է, իսկ որոշ դեպքերում՝ նույնիսկ անհնար ենթարկել քանակական չափման [6]: Դրանք կարելի է բաժանել երկու խմբի՝ անուղղակի խթանման միջոցներ, որոնք թույլ են տալիս նվազեցնել ներդրողի անուղղակի ծախսերը կամ ամբողջովին բացառել դրանք (օրինակ կարող է ծառայել աշխատողների ուսուցումը պետության հաշվին, բնակարանային խնդիրների լուծումը), արտոնությունների վրա հիմնված խթանումն օտարերկրյա ներդրողների համար սահմանում է շահավետ պայմաններ շուկա մուտք գործելու կամ ներքին և/կամ արտասահմանյան մրցակիցներից պաշտպանության տեսանկյունից: Մրցակիցների կողմից որոշ ապրանքատեսակների վրա դրված բարձր մաքսատուրքերը խտրական պաշտպանության ձևերից մեկն են, իսկ կառավարական պայմանագրերը՝ մեկ ուրիշը:

ՕՈՒՆ-ի համար մրցակցության մեջ առաջին անգամ մուտք գործող երկրի առջև կանգնած են նույն խնդիրները, ինչ այն ձեռնարկության համար, որը նոր ապրանք է մտցնում շուկա: Այս տեսանկյունից ներդրումների ներգրավումը կարելի է համեմատել արդյունաբերական մարքեթինգի հետ [3]: Երկրի մրցակցային առավելություններն առավելագույնս չեն գնահատվի օտարերկրյա ներդրողների կողմից, եթե բացակայի կամ թերի իրականացվի «երկրի գովազդը»: Ստորև քննարկվում են խրախուսման ինստիտուցիոնալ տեսանկյունները և այն միջոցները, որոնք երկրներն օգտագործում են ՕՈՒՆ ներգրավելիս: Ներդրումային քաղաքականության կարևոր բաղադրատարրերից են ներդրումների խրախուսման և պաշտպանության նպատակով ստեղծված հատուկ կառույցները: Պետք է նշել, որ շատ զարգացող երկրներ, որպես կանոն, ստեղծում են մեկ կամ երկու հիմնական հաստատություններ, որոնք կենտրոնական դեր են խաղում ՕՈՒՆ-ի ներհոսքի խրախուսման գործում: Խթանման միջոցները ներառում են ինֆորմացիայի տրամադրումը հնարավոր ներդրողներին, երկրի՝ որպես ներդրումներ կատարելու վայրի գրավիչ վարկանիշի ստեղծումը և հեռանկարային ներդրողներին ծառայությունների մատուցումը [9]:

Ներդրումային միջավայրի առանձնահատկությունների վերլուծությունը – Որպես տվյալ երկրում ներդրումային միջավայրի բաղկացուցիչներ՝ կարելի է

առանձնացնել ներդրումների համար բարենպաստ ռեժիմի ձևավորումը, ներդրումների անձեռնմխելիության ապահովումը, ներդրումների և դրանցից ստացված եկամուտների ազատ դուրսբերման հնարավորությունը, դատական մարմիններում ներդրումների խնդիրներին առնչվող պետական կառույցների որոշումներին վիճարկման հնարավորությունները և իրավունքները:

Անդրազգային կորպորացիաները նախընտրում են ներդրում կատարել գործարար և ներդրումային առողջ միջավայր ունեցող երկրների ձեռնարկություններում [2]: Ներդրումային և գործարար միջավայրի համար որոշիչ է քաղաքական և իրավական միջավայրը: Ըստ ԵԱՀԿ փորձագետների՝ գործարար և ներդրումային բարենպաստ միջավայրին նպաստող քաղաքական միջավայրի ստեղծման կարևորագույն գործոններն են անվտանգությունը, օտարերկրյա ներդրողի իրավունքների պաշտպանությունը և երաշխավորումը, օրենսդրական կայունությունը, թափանցելիությունը, ազատությունը կաշառակերությունից, պատշաճ կառավարումը [7]:

ՄԱԿ-ի Զարգացման Ծրագիրը (ՄԱԶԾ) թափանցիկությունը սահմանում է որպես տեղեկատվության փոխանակման և ներդրումային գործունեության իրականացման կարևորագույն գործոն: Թափանցիկությունը շահագրգիռ կողմերին թույլ է տալիս հավաքել տեղեկատվություն, որը կարող է էական լինել չարաշահումների հայտնաբերման և իրենց շահերի պաշտպանության հարցում: Երկրում նոր ներդրումներ իրականացնելուն առավելագույնս խոչընդոտում է կաշառակերությունը [10]:

ՀՀ-ում ներդրումային կլիմայի վրա ազդող և այն ձևավորող գործոններից առավել կայուն են հարկային և մաքսային համակարգին առնչվող պայմանները: Որոշակի կայունացման փուլ են անցել նաև քաղաքական պայմանները, սակայն դեռևս հստակ բարեփոխված չեն իրավական և դատական դաշտերը, իսկ ապահովագրական համակարգը չի գործում, հետևաբար հոգեբանական պայմանները նույնպես դեռևս չեն խթանում խոշորածավալ ներդրումների իրականացումը: Ներդրումային միջավայրի համար մեծ նշանակություն ունի նաև մակրոտնտեսական կայունությունը և տնտեսական աճ ապահովող քաղաքականությունների իրականացումը: ՀՀ մակրոտնտեսական դաշտի համակողմանի վերլուծության համար անհրաժեշտ է նաև մի շարք գործոնների հաշվառումը: Այդ գործոններն են ռիսկը և անորոշությունը, որի մեջ ներառվում է ներդրվող կապիտալի արդյունավետությունը և դրա դիմաց ստացվող շահույթի ծավալը, երկրի և համընդհանուր շուկայական ռազմավարությունը, մրցակցության դեպքում ռիսկը, արտարժույթային ռիսկը, քաղաքական ռիսկը:

ՀՀ ներդրումային միջավայրի ուժեղ և թույլ կողմերը. Այս իմաստով կառավարությունը շեշտը դնում է ՕՆԻՆ-ի վրա՝ որպես նոր արտադրական գործունեության խթանիչ ուժի և արդեն իսկ գոյություն ունեցող արտադրական ոլորտի զարգացման հնարավորության: Միջնաժամկետ կտրվածքով տնտեսական զարգացման առաջնայություններից է արդյունաբերության դիվերսիֆիկացիան:

Հայաստանի համար ուժեղ կողմեր են բնական ռեսուրսների գրավչությունը,

կրթված, փորձառու և էժան աշխատուժը, կայուն մակրոտնտեսական վիճակը, սփյուռքը, թույլ կողմերը՝ աշխարհաքաղաքական վիճակը, խրթին բիզնես միջավայրը:

ՀՀ ներդրումային քաղաքականությունը, ներդրումներին աջակցությունը ՀՀ Կառավարության տնտեսական քաղաքականության առանցքային ուղղություններից մեկն է և ամրագրված է ՀՀ կառավարության գործունեության ծրագրում: Ներդրումային քաղաքականությունը նպատակաուղղված է ներդրումային և գործարար բարենպաստ միջավայրի ձևավորմանը, կարգավորող միջավայրի թափանցիկության բարձրացմանը, երկրի մրցակցային առավելությունների բացահայտմանը, Հայաստանում իրականացվող ներդրումների ծավալների մեծացմանը, շուկայական ենթակառուցվածքների զարգացմանը և այդ բոլորի հիման վրա՝ տնտեսական զարգացման խնդրի ապահովմանը: Ներդրումային նպատակաուղղված քաղաքականությամբ և նրա արդյունավետ իրականացմամբ է մեծապես պայմանավորված երկրի արդյունաբերական և գիտատեխնիկական զարգացման հետագա ընթացքը: Հայաստանում իրականացվող ներդրումների աճի ապահովումը կլուծի մի շարք կարևորագույն խնդիրներ, ինչպիսիք են՝ աշխատատեղերի ստեղծումը, շուկայական տնտեսությանը հասուկ նոտիանների ներգրավումը, նոր շուկաների բացահայտումը, նրանց հասանելիությունը և այլն: Նպատակ ունենալով իրագործել արդյունավետ ներդրումային քաղաքականության՝ ՀՀ-ն հայտարարել և իրականացնում է «բաց դռների» քաղաքականություն: ՀՀ-ում ներդրումային ոլորտը կարգավորող հիմնական իրավական ակտերն են՝ 1994 թվականին ընդունված «Օտարերկրյա ներդրումների մասին» ՀՀ օրենքը, ինչպես նաև տնտեսական ոլորտը կարգավորող իրավական ակտերի ներդրումներին վերաբերող այլ դրույթները:

ՕՌԻՆ-ների առնչությամբ Հայաստանի նպատակներն ու ակնկալիքները ձևակերպված են Հայաստանի զարգացման 2014-2025թթ. ռազմավարությունում: 2008 թվականին հաստատված նախկին Կայուն զարգացման ծրագիրը (ԿԶԾ) Հայաստանը փոխարինել է Հայաստանի զարգացման ռազմավարությամբ (ՀԶՌ), և այս նոր ռազմավարությունը վերաբերում է 2014-2025թթ. ժամանակահատվածին [1]: ՀԶՌ-ը ունի չորս գերակայություն. աշխատատեղերի ավելացում, մարդկային կապիտալի զարգացում, սոցիալական պաշտպանության համակարգի կատարելագործում, պետական վարչարարության և կառավարման ինստիտուցիոնալ արդիականացում: Բիզնեսի և ներդրումային միջավայրի շարունակական կատարելագործումը դիտարկվում է որպես գերակայություն բիզնեսների հիմնումն ու ներդրումները խթանելու և պետության անհարկի միջամտությունները նվազեցնելու միջոցով: Ներդրումների և մրցակցության խթանումը պետք է շարունակեն մնալ որպես ՀԶՌ նպատակներ: Ներդրումային քաղաքականության արդյունավետության ավելացումը, ինչը նպաստում է առավել բարձր արտադրողականությանը, արտահանմանը և մրցունակության ավելացմանը, համարվում է այդ նպատակի իրագործման կարևոր բաղադրիչ: ՀԶՌ-ում նկարագրվում են քաղաքական բարեփոխումները, որոնք անհրաժեշտ են բիզնեսի և ներդրումային միջավայրի կա-

տարելագործման համար, մասնավորապես՝ պետության հետ ձեռնարկությունների և քաղաքացիների ուղղակի առնչության էական կրճատումը գերատեսչությունների միջև տեղեկատվության փոխանակման էլեկտրոնային համակարգերի ներդրման միջոցով, բիզնեսներին և քաղաքացիներին առնչվող պետական կանոնակարգերի միանվագ կրճատման և պարզեցման միջոցով (շուրջ 50%-ով), տեսչական ստուգումների համակարգի բարեփոխումները, կանոնակարգերի ազդեցության գնահատումները, բիզնես-կանոնակարգերի և ներդրումային միջավայրի լավագույն փորձի կանոնավոր ուսումնասիրությունը և Հայաստանում դրանց կիրառման հնարավորությունները: ՀՁՌ-ով նաև արձարծվում են տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտին աջակցող քաղաքականության իրականացման հարցերը, մասնավորապես՝ տեխնոլոգիաների, ինկուբատորների և SS այլ ենթակառուցվածքների ստեղծման շարունակումը, արդիական դասընթաց իրականացնելու և անհրաժեշտ լաբորատորիաներ ձեռք բերելու գործում համալսարաններին աջակցությունը մասնավոր հատվածի հետ համագործակցության խթանման միջոցով, SS ոլորտում արտահանման ներուժը խթանող նպաստավոր հարկային քաղաքականության իրականացումը, SS ոլորտի ՓՄՁ-ներին և նոր սկսող բիզնեսներին պետական աջակցության ծրագրերի իրականացումը, ուղղակի աջակցությունը նորարարական արտադրանք կամ ծառայություններ առաջարկող SS ընկերություններին:

Ներդրումների տիպաբանության շրջանակը Հայաստանի ՕՈՒՆ հոսքերի նկատմամբ կիրառելով կարելի է նկատել շուկաների հայտնաբերմանն ուղղված ներդրումների գերակայությունը: Հաշվարկվել է, որ 2009-2017թթ. ընթացքում ներդրումների հոսքերի հանրագումարի 78 տոկոսն ուղղված է եղել շուկաների հայտնաբերմանը, որը մեծ մասամբ բաղկացած է ոչ առևտրային ծառայություններից, որոնց համար շուկայի առկայությունն այդ ծառայությունները մատուցելու միակ եղանակն է [8]: Բնական ռեսուրսների բնագավառում ներդրումը փոքր է եղել՝ կենտրոնացված հանքարդյունաբերության վրա, ինչն արտացոլում է երկրի տնտեսությունում այս ոլորտի փոքր ազդեցությունը: Արդյունավետության բարձրացմանն ուղղված ներդրումների փոքր մասնաբաժինը վկայում է, որ երկրին չի հաջողվել լիարժեք օգտվել տարածաշրջանային/համաշխարհային արժեզրթաններից, իսկ միջազգային շուկաներ մուտք գործելու արտոնությունները մրցունակության հետ կապված հարցեր են առաջացնում նման ներդրումների համար երկրի գրավչության առումով: Արդյունավետության բարձրացմանն ուղղված ներդրումների փոքր մասնաբաժինը չի համապատասխանում նաև Հայաստանի զարգացման տեպլականին, որը հակված է ավելացնելու հմտություններ պահանջող աշխատատեղերը, արտահանումները, տեխնոլոգիաների փոխանակումը, ինչպես նաև ձևավորելու գիտելիքահեն տնտեսություն: Արդյունավետության բարձրացմանն ուղղված ներդրման առումով, հատկապես բարձր հավելյալ արժեք ապահովող գործողությունների պարագայում, կարևոր է տաղանդավոր մարդկանց գրավելու և նրանց երկրում պահելու երկրի կարողությունը: Այս երկու ոլորտներում էլ Հայաստանը ցածր ցուցանիշներ է գրանցել: Տեղացի մատակարարների առ-

կայությունը ևս կարևոր է. տեղացի մատակարարների որակի և քանակի առումով Հայաստանը զբաղեցնում է համապատասխանաբար 86-րդ և 79-րդ տեղերը, չնայած որ գիտնականների և ինժեներների առկայության հարցում 75-րդ տեղում է: Նորարարության ոլորտի մի շարք ցուցիչներով, օրինակ՝ գիտահետազոտական հաստատությունների որակը և գիտահետազոտական ասպարեզում համալսարան-արդյունաբերություն համագործակցությունը, Հայաստանը համեմատաբար ցածր տեղեր է զբաղեցնում, թեև բարձրագույն կրթությունում ներգրավվածության ցուցիչով զբաղեցնում է 59-րդ տեղը: Կապի ապահովվածության վարկանիշները տարբեր են. միջազգային համացանցային թողունակության ցուցիչով 48-րդ տեղում է, սակայն համացանցից օգտվող անհատների թվով՝ 71-րդը, իսկ անլար շարժական կապի բաժանորդագրության ցուցիչով՝ 67-րդը:

Հայաստանը հարմար է տեղեկատվական տեխնոլոգիաների (SS) ոլորտում ներդրումներ կատարելու համար՝ ունենալով լավ կրթություն ստացած, SS հմտությունների տիրապետող աշխատուժ՝ անգլերենի իմացությամբ, SS և հարակից գիտությունների ոլորտում մասնագիտացված համալսարանական ծրագրեր, SS ոլորտի աշխատանքի մրցունակ վարձատրություն և պետական աջակցություն SS ոլորտին, գումարած կապերը Եվրոպայում և Հյուսիսային Ամերիկայում ապրող խոշոր և հաջողակ սփյուռքի հետ:

Ընդհանուր առմամբ՝ ՕՌԻՆ-ը օժտված է տնտեսական աճի, դիվերսիֆիկացիայի, հետևաբար նաև կառուցվածքային վերափոխման կարևոր շարժիչը դառնալու ներուժով: Նոր աշխատատեղեր ստեղծելով, աշխատուժը ցածրարժեք աշխատանքից դեպի բարձրարժեք աշխատանքներ ուղղելու հնարավորություններ ընձեռելով, ինչպես նաև աշխատուժին և տեղական ֆիրմաներին լրացուցիչ հմտություններ ու գիտելիքներ փոխանցելով՝ ՕՌԻՆ-ը կարող է տեղական տնտեսության շարժիչը դառնալ: ՕՌԻՆ-ը նաև շարժիչ ուժ է տեղի տնտեսությունը միջազգային մասնավոր հատվածի հետ կապելու առումով՝ տեղական ընկերություններին տրամադրելով արտադրության համաշխարհային արժեչոթայում ինտեգրվելու լայն հնարավորություններ: Արդի պայմաններում ապրանքների և ծառայությունների մեծամասնությունը սպառողներին հասնում է ավելի շատ օտարերկրյա մասնաձյուղերի, քան ուղղակի վաճառքի միջոցով: Ավելի քան 80,000 մասնաձյուղեր տիրապետում են ավելի քան 97 տրիլիոն ԱՄՆ դոլարի հասնող ակտիվների՝ վաճառելով ավելի քան 34 տրիլիոն ԱՄՆ դոլարի ապրանք ու ծառայություն և գոյացնելով 7 տրիլիոն ԱՄՆ դոլարի ավելացված արժեք [23]: Օտարերկրյա մասնաձյուղերը ողջ աշխարհում ուղղակիորեն ստեղծում են ավելի քան 71 միլիոն աշխատատեղ: ՕՌԻՆ-ները և առևտուրը անքակտելիորեն փոխկապակցված են անդրասահմանային արժեչոթաներում ներգրավված միջազգային արտադրական ցանցերի միջոցով:

Համաշխարհային բանկի աշխատակից և ազատականացման կողմնակից Դեյվիդ Դոլարը նշում է, որ ոչ մի զարգացող պետության չի հաջողվել բնակչության կենսամակարդակը բարեհաջող կերպով բարձրացնելով հասնել արագ և հաստատուն տնտեսական աճի՝ առանց միջազգային ներդրումների համար

իրենց տնտեսության բացության մակարդակը բարձրացնելու: Վերոնշյալ հաջողությունների պատմությունները միայն միջազգային ներդրումներին չի կարելի վերագրել: Երկրների համար ամենակարևորը ներդրումների համար տնտեսության նպաստավոր միջավայրի ապահովումն է: Այսպիսով, երբ ներքին միջավայրը կլինի բարենպաստ ներքին ներդրումների համար, այն բարենպաստ կդառնա նաև օտարերկրյա ներդրումների համար:

Կարող ենք եզրակացնել, որ ներդրումների խթանման ճիշտ քաղաքականության որդեգրման դեպքում ներգրավված ներդրումները կապահովեն հաստատուն տնտեսական աճ, կբարելավեն տնտեսության ենթակառուցվածքները, կբարձրացնեն միջազգային մակարդակով երկրի մրցունակությունը, կօգնեն պայքարել երկրի անհավասարաչափ զարգացման դեմ, կբարձրացնեն բնակչության կենսամակարդակը: Օտարերկրյա ներդրումների պետական կարգավորումն առաջին հերթին պետք է հետապնդի ազգային տնտեսության անվտանգության շահեր՝ ձգտելով նրան, որ ներդրումների ակտիվ ներհոսքը չբերի տնտեսության ինքնուրույնության աստիճանի կորստի, մարդկային կապիտալի որակական կազմի փոփոխությունների, «ուղեղների լվացման», ներքին կապիտալի շուկայում ներդրումների գերիշխող դիրքերի դրսևորման և չարաշահումների:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Հայաստանի զարգացման ռազմավարություն 2025:
2. Quantitative and quality standard of the investment climate, Anisimova Elina Vladimirovna.
3. UNCTAD, cross-border M&A database (www.fDimarkets.com)
4. <http://articlekz.com/article/8082>
5. www.escwa.un.org/information/publications/.../edgd-08-tech1-e.pdf
6. <http://econbooks.ru/books/part/16529/>
7. <http://readbookz.com/pbooks/book-41/ru/chapter-2063/>
8. http://www.armstat.am/file/article/sv_10_15a_420.pdf
9. <http://www.investmentsandincome.com/investments/foreign-direct-investments.html>
10. <https://data.oecd.org/fdi/fdi-flows.htm>
11. www.offi.org Organization for International Investment. Trends in Foreign Direct Investment (FDI)

Инвестиционная среда Республики Армения в контексте тенденций развития международных инвестиционных процессов

Геворкян Арmine

Резюме

Ключевые слова: *глобальный рынок, финансовые ресурсы, глобализация, конкуренция, политика продвижения, экономический рост*

Конкуренция между странами на мировом рынке более остро стоит для ПИИ, чем конкуренция на потребительских рынках, поскольку ПИИ также приводят к широким кругам потребительских рынков, и поэтому основное внимание уделяется изучению и анализу ПИИ. В то же время не только развивающиеся страны конкурируют для ПИИ, но и развитые страны, что и делает конкуренцию более и более «жесточкой». Для тех стран, экономика которых нуждается не только в «инъекции» разумных финансовых ресурсов, но и во внедрении новых технологий и оборудования с исключительной скоростью, на сегодняшний день более эффективным и неотложным способом являются ПИИ. Естественно становится ясным актуальность исследования. ПИИ находится на уровне нынешней глобальной экономики и национальных экономик.

Экономические системы разных стран становятся все более открытыми для иностранных инвестиций. Для обеспечения экономического роста ряд стран в качестве своей основной стратегии приняли обеспечение экономического роста за счет иностранных инвестиций. В соответствии с нынешними процедурами глобализации Армения должна предпринять различные шаги для повышения привлекательности инвестиционной сферы и разработки эффективной инвестиционной политики, чтобы оставаться конкурентоспособной. В этом и заключаются актуальность, важность и практическое значение выбранной темы в том числе и для экономики Армении.

The Investment Environment of the Republic of Armenia in the Context of Development Trends of International Investment Processes

Gevorgyan Armine

Summary

Key words: *global market, financial resources, globalization, competition, promotion policy, economic growth*

The competition between countries in the global marketplace is more acute for FDI than competition for consumer markets, as FDIs also lead to the wide horizons of consumer markets, and that's why the focus is on studying and analyzing FDI. At the same time, not only developing countries are fighting for FDIs, but also developed countries, which makes the competition even more «wild». For those countries whose economy requires not only the “injection” of reasonable financial resources, but also the introduction of new technologies and equipment with exceptional speed, today FDI is a more efficient and urgent way. Naturally, the relevance and urgency of the of FDI research becomes very clear for both global economy and national economies.

Economic systems of different countries are becoming more and more open for foreign investment. A number of countries have adopted as their core strategy the provision of economic growth through foreign investment. In line with the current globalization procedures, it is required from Armenia to undertake a variety of steps to enhance the attractiveness of the investment field and to develop an effective investment policy, in order to stay competitive. And that concludes the relevance, importance and practical significance of the chosen topic for the Armenian economy as well.